

լու՝ բան չսորվիլըսելէ, և խելացի աշխատանք չէ. իսկ տարին գոնէ տասն, տասնումէկ ամիս սովորողը՝ միշտ սովորածին վրայ կ'աւելցընէ, և երբոր այսպէս քանի մը տղայութեան տարիները անցընէ նախակրթարանաց կամ՝ դպրոցաց մէջ, եւրոպական վարժարանաց մէջ անհամեմատյառաջիմութիւն կընայ լնէլ:

Պարզեաբաշխութենէն առաջ վարժարանին տեսուչ վարդապետը՝ որ արդէն ժամանակ մը աշխատեր էր այս աշակերտաց նախակրթութեանն վրայ Պօլսոյ Ախիթարեան դպրատան մէջ, հանդիսական ատենաբանութեամբ իր սանիցն իմացուց՝ թէ Ամրդուս առաջին ուսմունքն՝ ինքն իսկ մարդն է. ամէն բանէ առաջ պէտք է որ մարդն ինքն վինքն ձանճնայ, բայց առանց Աստուծոյ չի կրնար մարդ ձանճնալ զինքն. ուրեմն պէտք է նախ զԱստուած ձանճնալ, և անով իմանալ թէ ինչ աստիճանի մէջ զրեր է նա զմարդ, և ջանալ այն աստիճանին համելու, կըթելով զինքն յարմարագոյն և օգտակար ուսմամբք. և թէ որն են այն ուսմունքներն որ իրենք ալ վարժարանիս մէջ սովորելով իրեւ սանդիմոց վրայ ոտն առ ոտն վեր պիտի ելլան՝ համառօտիւ բացատրեց անոնց :

Իսկ այս լրմբնցուցած ուսումնական տարւոյն մէջ սովորածնուն ցուցակը, ինչ պէս նաև իրենց անուանքն և յառաջադպիմութեան նշանակարգն՝ Ճիշդ կ'երեւան ետեկի աղիւսակին մէջ. միայն գիտնալու է, որ թէպէտ հոն ամէն ուսմանց վարժութիւնը նոյնչափ աստիճան բաժնած չէ, բայց համեմատութիւնն նոյն է. վասն զի քանի աստիճան կամ վարժանշան բաժնած է ուսմունք մը՝ անոր գրեթէ ինչուան կէ. որ կամիրեքին առջի մասը՝ քաջավարժ կը նշանակէ, քաջաց մէջ քաջագոյնն ալ կ'իմացուի բարձր թիւերովն. իսկ մնացեալ կէսն կամ երկու մասն ալ դարձեալ կէս բաժնելու է, առջինը ուսմանց մէջ միջակ վարժ եղողներն կը յուցընէ, վերջինը՝ անոնցմէ ալ վարե-

զողնելն . միայն վարքերնուն մէջ՝ ամենէն ստորինն ալ միջակէն վարպէտք չէ սեպել: Ուր որ ինչուան տասն աստիճան բաժնած է՝ կը ցուցընէ մէկզմէկէ քիչ շատ առաւելութիւնն . որոնց որ նոյն թիւը կրկնած է՝ ըսել է որ հաւասար են: Իսկ ուր վարժանշանից քով աստղ՝ զրուած է՝ կը նշանակէ թէ ուսանողն այն ուսման մէջ ամենէն քաջ կամ առաջին քաջաց մէկն եղած է, և հասարակաց արուած և կամ Բ մրցանակէն զատ առանձին մրցանակ մ'ալ առած է այն մասին համար, անոր համար մրցանակաց նշանին քովն ալ դրուած է նոյն աստղն . իսկ ուր որ միայն մրցանակաց քովն աստղ կայ՝ կը նշանակէ թէ թէ պէտ ուսման մը մէջ առաջնութեան չէ հասած, բայց իր ընդհանուր ջանիցն համար արժանի սեպուեր է առանձին մրցանակի ալ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Ապրեռբագոյն՝ ի Գիտութիւնն և Տարդոյ՝ Տարդու:

ՓՈՓ

ԴԱՎԱՌ քաղցր արդարեւ և հեշտական յետ վաստակոց հանգիստ, և քըրտանց և Ճգանց յախորժ արդիւնս նոյնին վայելել: Եւ զի՞նչ այլ, ո արգոյ Ճարդ և ակրմբիս գահազլուխ աստուածընտիր Ճայրապետ, և զի՞նչ այլ սերկեանս ձեր այս խնդահրաւեր խմբումն, եթէ ոչ յորդեգորով սրտից և 'ի հայրենասէր մնաց 'ի հրձուակիցն խնդակցութիւն ընդ մեզ 'ի վերայ մերոցն զուգնաքէից աշխատութեանց աշակերտելցն և վարժաց : Այլ զի ընդ խրախուսիչ քաջալերական ձայնիցն իրաւունս իմն նկատեմ դատաւորականս 'ի ձեզ, որով պարտ և պատշաճ զմերոց խորհրդածութեանց և զգնացից տալ զհամար :

Եւ քանզի յօրէ յօրմէ երկնազմեցիկն վասն իմ և զցդ աստուածահրաման

ակնարկութիւն է հիս բառնայր յանզօր թիկունս զայս բեռն ծանր դաստիարակութեան մանկուոյս, երկիւղախառն յուսով որ ապաէնն է տիկրաց վատահացեալ, այս եղեն մնաւորական յուզմանց որոշք, այս իղձք սրտատրոփ, թէ իւ արդեօք և որպէս և իմովսանն անդատապարտ՝ ի գործ պաշտամանս գտանել մարթիցիմ, և որով պատկել զգեղեցիկ ակնկալութիւն աստուածազումար լուղովցու, և զմեծիղձն տենչ տանս հայրենեաց՝ ի հաւատացեալ ինձ՝ ի սրբազն աւանդս,՝ ի գասս ասեմ աղածրի մանկուոյս, անտիւղձ զանմեղութեան միտս նոցա պահելով՝ յաւելու ճոխացուցանել առաքինի և աստուածային իմաստասիրութեամբ. որով բարեբազագունի կենաց պատրաստել զնոսա, և անձանց և հայրենեաց իւրեանց երանութեան գոլ առիթս։ Ը ատ իսկ խորհրդածեալ՝ ի սոյն, զայս միայն գտի գիտութիւն ըղձից սատարիս ուսուցանել նոցա զմարդն. Ճշմարտապէս կացեալ՝ ի վերայ թէ չկը կարեսորագոյն՝ ի գիտութիւնս մարդոյ՝ քան զմարդն զլսովին։

Խելամուտ եղեն այսմ յետ մանրայց հետազօտութեանց և որդիք իմաստնոցն անելու հացենաց, բայց ոչ ամենեւին ճշմարտութեամբ։ Վանզի՝ ի սրբավայրս զրոշմեալ նուիրական տառիւք ծաներ չեւ, չաջողեաց երբեք ումեք՝ ի նոցանէ ճանացել թէ զի՞նչ մարդն իցէ, քանզի գայթակղեցին՝ ի գիտութեան լուսուծոյ, և ըստ առաքելոյն ասելց՝ ծանեան զլուսուած, այլ ըստ ամբարտաւան խորհրդոց իւրեանց և ըստ քմաց ախորժակի, և ոչ որպէս պարտն էր։ Օ ի որպէս ճշմարիտ աստուածգիտութիւն լուսուծոյ է, սոյնապէս և ստոյգ գիտութիւն մարդոյ յաստուածգիտութենէ. գեղեցիկ զօդիւք կցորդեալ՝ ի մի զուգութիւն։

Խւ որ՝ ի նրբամիան և անձնապարձիկ իմաստասիրաց, Առկրատեանցն ասեմ, Պղատոնեանց և Խոնփուկեանց և այլ հոյակապ անուանց դաղտնի եկաց գիտութիւն, աստուածասիրաց միայն

Վրիսատոսեանց պարզեալ կայ. թէ ոլուծուծոյ երկիր, և զպատուիրամսս նորա պահեա, և այս է ահա մարդն ամենեին,, : Վանզի քրիստոսեան կրօնից է միայն ծանուցանել մարդոյ զմարդն. որով հաւաստի ամենեին թէ չէ հասանել դիտութեան մարդոյ առանց բարեպարիշտն հաւատոց և ուղիղ դատիարակութեան. և թէ ուր պակասին սոքա, այն ամենայն սեթեթեթք են արտաքնայարդարք, և ոչ ուսուցանեն մարդոյ զմարդն։ Որով արտաքնոցն զիտութիւն աւանց ծանուցանելոյ մարդոյ զներքին իւր մարդն, վատթարագոյն է քան զտգիտութիւն։

Խւ գու Խւրոպէ, զքնաղդ և թըշուառ, տխուր ճշմարտութեանս վկայ առ դուրս կաս. ուր զի խոտորեցան որդիք քոյտղիղ հաւատոց և՝ ի բարւոք դաստիարակութենէ՝ գետահետեալ յորդեցին՝ ի քեզ չարիքդ ամենայն. և մօտալուտ մահահօտ սպաւնալիք արեանց և աւերակաց՝ ի վերայ կայ. մինչ ոչ ապաշաւեալ զարձցիս՝ ի ճշմարիտ գիտութիւն մարդոյ, և առնուցուս՝ ի միտ թէ ։ Լուսուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է, և զաւետիս կենաց ունի զարդիս և զհանդերձելոցն,, :

Ա.

Վարդոյս սահման տալ՝ խորոցն լուսուծոյ խորհրդակից է լինել. քանզի ոչ որ տեսանեմքն է մարդն, այլ որ աներեցիթ մարդս է, որ հաստեցաւն՝ ի պատկեր աստուածութեանն, որ ծանրագանդաղ վայրածորելի հողայարկ բընակութեամբն խոնարհ քան զհրեշտակս, վախճանաւն ոչինչ նուազեալ քան զնոսա, անմահութեան նոցին վիճակակից։ Որ՝ ի տեսիլ ածէ յինքեան զամենազօրն զօրութիւն հրաշագործելով զտիկեզերս. և՝ ի սոսա թռուցեալ երկրիս զնտակ ընդ բիւրս բիւրուց արեգականց և ընդ բազմաթիւ աշխարհաց կախելոց յանձայր աստարէ զուլութեան։ Խւ ի վեցեակ շարս ամսնա-

կաց յօրինելով զերկիր 'ի բնակութիւն հանդերձելոյ թագաւորին մարդոյ՝ որ մեծաքանչեղելութեամբ կառուցեալ կանգնի 'ի հողոյ և շնչոյ աստուածութեանն իշխան արարածոց և յետ Առտուծոյ աստուած նոյին : Անէպէտ ոչ բաւելով մարդոյս հողաղանգուած մասն տանել մեծութեան փառաց աստուածայնոյն , և նախանձաքեկ յազգակիցն իւր հողամասն գոգ իմն ընկղմեալ խորասուզի 'ի նոյն , մինչեւ նորոգողին կըր կին վերամքաւնալ զնոյն և հրաշապատիւ ազգախառնել ընդ աստուածութեան իւրոյ : Աակայն և յետ այնորիկ կրկին 'ի մեզ տեսանեմք մարդոս , երկրասեր և աստուածախառն , աստուածազաւակ : Առաջինն գետնաքարշ զեր կրաւ յածի միշտ , երկրորդն զերկնիւք քերէ : Այն մարմնոյ է ստրուկ և ապականութեան ծառայ . և միւսն գեր 'ի վերոյ անցեալ քան զերկրաւորս՝ անեղծութեան է ցանկացող : Եւ մարդոյ ազատ կամք անբռնադատ կացեալ 'ի միջի երկուց հակառակ էակաց 'ի մեզ . կամ 'ի մին հակամէտ՝ հայթայթէ անձին զանգիւտ կորուստ , կամ միւսոյն անսացող՝ երջանիկն անմահութեան լինիցի ինքեան առիթ :

Համարիտ մարդն , ահա մարդք բրիստոնէի . և ոչ զոր փիլիսոփայքն երազեցին և վոհմակը անսատուածիցն և մարդադէմ գազանաց ձարտարեցին սահմանել : Դնունդ իմն դիպուածոյ , անսագորոյն և անհեթեթ էակի խաղալիկ , վատթարագոյն քան զանբանս , զիչ անբան . և քան զոյինն՝ ընչացեալ միանգամի : Դարձեալ ձիւաղ իմն է հրէշաւոր և քան զվարդապայն քաղեայ և չէ մարդ , զոր Դենեւացոյն օձաբընոյթ , նենգուապատիր , քաղցրաբան լեզուն համարեաց : Ար արգահատելով իմն ընդ անբաւ աղէաս նորա , դիւթութեամբ առեալ ածէր զնայանտառս 'ի վայրէնաբնակ կենցաղ և լինկերութիւն անասնոց : Եւ զմարդկութեան մտաց վերածնող և զայեակ զքաղաքաժողով ընկերութիւն մերժեալ , այլ իմն մոլորաշաւիլ դժոխորոգայթ ձանապարհաւ :

'ի ջոկս անբանից զնա վերբերել նկըրտէր :

Այլ մեք հաւատովք և ուղղադատ իմաստասիրութեամբ իւելամուտ մարդումն լեալ , այսուհետեւ ոչ գայթակղեցուսցէ զմեղ բազում ուրեք նորին ընդ անբանսն հաւասարութիւն . մանաւանդ 'ի սկիզբն նորա 'ի հանգունատիպ ծնունդ , և 'ի կատարած 'ի հեք մահ : Վանդի յամենայն 'ի սեռս կենդանեաց մարդն է միայն , որ ոչ որ էն եկեալ յաշխարհ՝ ընդ աստիճանս իմն վերամքառնայ 'ի մարդկութիւն : Այլոց 'ի կենդանեաց բնածին և բնատուր հայրենաժառանգ ձիլք են , որովք մին մի 'ի նոցանէ յարուցեալ կանգնին 'ի կեանս , և հասարակաց օրինօք բնութեան բռնադատեալ տեսանին 'ի նոյն կարգ , 'ի նոյն սովորոյթ և 'ի նոյն տարագ կելոյ : Արակէս զի տեսանեմք զհրաշալին 'ի միջատո խլրտեալ զարթուցեալ 'ի պարուրափակ պատուտակացն 'ի թըսէ , և անդէն ինքնուսոյց , ինքնազէտ , ձարտարագոյն քան զնախմիս և քան ըզ . հաւսն բազմահմտւտ արուեստիւն զքիմն պարարել նեկտարեան քասղորութեամբ և զաշխարհս լուսաւորել : Օնոյն է տեսանել և 'ի սարդիցն ազգ , զնոյն և 'ի բազմախուռն ցեղ միջատիցն և կենդանեաց ընդ կենաց և զհամակ ձարտարութիւն ազգին բարձեալ բերել ընդ իւրեանս :

Ինդէր և մարդոյ որ անկշիռ , անզուգորդ յանչափս գերազանցեալ է քան զնոսա , ոչ այս բնածին շնորհք : Վայնայաշխարհ ողորմքան զամենայն շնչաւորս , ոչինչ ամենելին ունելով պատկանաւոր նշանակ կանխազեկոյց իւրոյ մեծութեան : Աերպարան տիսեղծ ամենելին՝ թէպէտ մարդաձե . ոչ տեսական զօրութիւն , ոչ լեռութիւն , ոչ ջոշափական փորձ , ոչ հոտոտելիք և ձաշակ : Խակ մտաց , խորհրդոց , կամաց և հոգւոյն չիք և ոչ աղօտ առերեւոյթ ցոյց : Աակայն են ամենեքեան և բանտեալ յանզօր և յապիկար մարմնի . զոր օրինակ կաղնի մի մեծ ամփոփեալ թագքցի 'ի սերմն իւր փոքրիկ , 'ի խուն կե-

ղեիկն՝ անդնդախոր, երկրատարած արմատովլքն, հսկայած բնովն, երկնասլաց, ամպածրար գագաթամբն, մեծասիրու ոստովք և տերեւովք և պտղովք, խնամուտ ձեռաց մշակին մնալով ժողովելց զնա 'ի ծոց երկրի, սապէս և մարդս 'ի դոյցն մարմնի տղայոյն ամփոփեալ ամենայն պատահական կատարելութեամբք հանգերձ : Եւ ո՞ սորա մշակիչ դայեակ և մնուցող դաստիարակ . — քաղաքաժողով ընկերութիւն մարդկան: Քանզի մարդոյս 'ի հողս 'ի հասարակաց մօրէ տուեալ մարմին, յաստուածութենէ անտի հոգին . իսկ մարդկութեան նորա ձիրք և առաւելութիւնք յաստուածակարդ ընկերութենէ սահմանեցան: Ի՞աքէ . արտաքոյ մարդաժողով ընկերութեանս գագան է ինքնին արտաքին մարդս, զի ապստամք գտաւ յաստուածապայման կենացն . թագուցեալ հոգին 'ի վայրենի մարմնի, անտառասէր, վայրագ և յափշտակիչ պատառող, ոչ զմարդոյ ունելով միտս, և ոչ գոգես կամաց ազատութիւն և ոչ զնորին յայտարար լեզու . և զոր բընութիւնն անքան տայ մարմին, մարդկայինս ընկերութիւն 'ի բանաւոր զայն փոխէ մարդ :

Եյսպէս ահա աստուածատուր այս ընկերութիւն աւանդապահ կայ ողջոյն ձրից մարդկութեանս, իբր սիրալի իմն շղթայիւ 'ի նախամարդոյն սկզբնաւորեալ ամենայն ադամածնաց ազգ 'ի մի լցորդելով 'ի մարդն: Եւ այսր մարդկայնոյ ընկերութեան ընտիր գանձուցն մատուակ և բաշխող դաստիարակութիւնն է, որ զմարդ ծանուցեալ մարդումն համբառնայ զնա յայն՝ որ կշռեցաւն նմա յլստուծոյ կէտ նպատակի: Երանի ապա ժողովրդոց, որ գտողք եղեն ուղիղ դաստիարակութեան և մեծարողք նորա, երանի և դարձեալ երանի, զի սովաւ 'ի գիւտս են մարդկութեան և բարեթաստիկ աւուրց: Այս և նորին արհամարհողացն, և որ ապախտքն զնովաւ արարին. եղուկ մարդկութիւն նոցա. թշուառ և անմիտ կեանք նոցա: Ա ասն որոյ և քան

զամենայն թշնամիս մարդոյ՝ թշնամագոյն պարտ է զնուա համարել որ խոչընդուն ուղիղ դաստիարակութեան և արդել լինիցին. և խժագոյն քան զմարդապանս և զմարդագոյս, որ զմարդկութիւն յափշտակել 'ի մարդոյն ժաղիցին. և զնմանիս իւրեւանց 'ի վերելս սնափառ անմիտ մեծութեանցն համարին:

Քանզի այլոց 'ի կենգանեաց բնիկ կենացն անգիտութիւն՝ զերջանկութի գործէ. իսկ մարդոյս անգիտանալ զանձնէն՝ թշուառութեան նորա է առիթ. զի աւածնոյն էութիւն 'ի տղիտութեան է, և երկրորդին ուսանելոյ յինքեան զմարդն: Ա ասն այնորիկ դարձուցեալ միանգամ զաս ընդ ոլրտս երկրի ընդ համակ եղելութիւնս, և տեսանիցեմք զամենացեղ կարգս արարածոց 'ի կայի իւրեանց անփոփոխ հաճք և հաւանք ընդ իւրեանց պայման: Ա օդականք՝ ընդ լուզականաց մախան բաղդ, և ոչ սոքա զանդնդաբնակ կենցաղ փոխել յօդաթոիչ կեանս. ոչ չորդուանիք զփետրաւուաց բազմալ զվիճակ, և ոչ միահամւուն կենդանիք մարդկայնոյ կենաց հետամուտ: Վարդոյ միայն է թողեալ անգոհ լինել ընդ իւր պայման, յար 'ի փոփոխմունս ըղձից կալ. զի ինքնատէր ստեղծաւ և ինքնիշխան կամաց իւրոց, կամ աղետից անձին և թշուառութեան առիթ լինել մոլար շաւզօք թափառեալ, և կամ ցանկալոյն երջանկութեան, ընդ ուղիղ ձանապարհ հաւատոց և դաստիարակութեան:

Վրածնորդ շաւզաց մարդոյն և ուղղեցոյց ողջոյն կենացն տուաւ դաստիարակութիւն: Եւ միոյ միոյ 'ի մարդկանէ համօրէն ընթացից կենաց երաշխաւոր կայ յանտիական հասակէն ընկալեալ ազգումն բարւոյ կամ չարի: Ա ասն որոյ քան զծննդոց բաղդ՝ դաստիարակութեան է աշխարհի պայմանս կենաց բաշխել: Եւ ոչ առանձին անձին միայն, այլ և ազգաց, ժողովրդոց և պետութեանց: Ա ամանէ տէրութեանց կանգնումն և կործանումն:

Քանզի և բազում անգամ անցանելով իմ ընդ մեծանուն մատենագիրս

Աւրոպայ , և ուշի ուշով միտ եղեալ՝ ՚ի նկարագիրս նոցա զազգաց և զժողովը քոց դրացեաց և զհեռաւորաց , տեսանէի գիւտ իմն ըստ կլիմայից զանազանութեան տալ նոցա բարս , կրօնս , օրէնս և սովորոյթս : Ուն զի այս ազգը ընդ այսու բնակեալ աստիճաննաւ , որոյ վասն և այսպիսի բարուց հանդիպեալ . այն ոք ժողովուրդ ընդ այնու անկեալ երկնիւք , սակա որոյ և այսօրինակ սովորութեանց և կարգաց վիճակեալ : Դորոգել իմն կամելով կարծես զքաւդէից գիտութիւն , թէ օդոց զանազանութեան իցէ , ջերմութեան կամցըրտութեան , և աստեղաց ազգեցութեան վայրենի աւնել զմարդ կամ ընտասուն համբոյր 'ի քաղաքականութիւն . կրօնասէր կամանկրօն , քրիստոնեայ կամ մահմետական : Խցեն ողք և զնորադանդից մնորութիւն ըստ կլիմայից բաժանիցեն : Պարտ էր հարցանել ոոցա , թէ ոչ նոյն էին օդք աշխարհաց իւրեանց որինչ առ նախնեօք և այժմ . սակայն որպիսի զանազանութիւն ընդ նախահայւսն և ընդ թոռունս 'ի կրօնա և յօրէնս , 'ի կարգս , 'ի սովորոյթս և 'ի բարս : Ոչ նոյն օդք էին Ամերիկացւոց աշխարհին երեքարիւր ամօք յառաջ և այժմ : Ոիթէ փոփոխեցան Ամիրիկէ որինչ էրն առ Ջերտուղիանոսիւ , առ (Ճոստինեաւ և Կիարիբանոսիւ : Այս կարծեմ զհողովմայեցիս և ընդ նովին երկնիւք և որ առ մեօքն և առ (Ճոստեաւ , առ Փաքրիկեաւ և Կինկիննատոսիւ . սակայն որպիսի խտիր 'ի նոսա տեղեկագոյն քան զիս էք : Ապա ուրեմն իցէ ինչ բռնագոյն 'ի մարդիկ քան զօդոց փոփոխութիւն 'ի լաւն կամ 'ի վատթար զնոսա կրթել . այս կամ այն բարուց տէր դործել , կրօնասէր կամանկրօն առնել : Այս է ահա դաստիարակութեան ազգեցութիւն . այս էր որ տայր երբեմն Յունաստանի 'ի նոյնացեղ միաշուրթն յորդիս նորա՝ ժողովուրդս այլաբնոյթս , հակառակախորհուրդս , այլակարծիս , միով բանիւ Ապարտար ձեռին դաստիարակութեան իբրեւ ջոկ իմն անասնոց խառն 'ի խուռն , կամ իբրեւ զհեղեղ սահեալ անցանէր մարդկութիւնս խառնէլ 'ի ծով յաւիտենիս :

միում , յազգի և 'ի գաւառի , այլ և 'ի համազգի քաղաքացիս , 'ի նուազաթիւ ժողովրդեան , յընտանիս անգամ և յեղբարս այլախորհուրդս իրերաց և ոխերիմն յարուցանել գիտէ , որոյ և 'ի հաւաստիս չունիմք պէտս 'ի հեռաւորս ընթանալ :

Այսորժեմ աստ զդաստիարակութէ զօրութիւն 'ի հանդէս բերել օրինակաւ մեծի իմաստասիրին : Օ որ օրինակ , սէ , խորամուխս սրահայեաց ակն ճարտարի դիտէ ընտիր արարեալ գտանել ինչ ինքեան արժանի 'ի զանգուած անհեթեթ ժայռի , 'ի կոթող ինչ անկերպարան , յորոյ յաներեցով գեղն ցանկացեալ և 'ի փոշոյն և 'ի տղմոյն 'ի բաց զնա մաքրեալ , և իւրով արուեստին հընարագիտութեամբ՝ զանարդն և զանձեւնիւթ 'ի վայելքականն և 'ի չքնազ հասակ և 'ի կերպարան ածիցէ , շունչ իմն և ոզի տալով նմին , կամանմեղ և փափկամորթ մանկան , կամքաջանջ , կաշըմբուն հսկայանդամ երիտասարդի , եթէ փափկասուն գեղագէմ օրիորդի , եթէ սպիտակ ալեօք մեծաջաղատ մեծարոյ ձերունւոյ . այսպէս և դաստիարակութիւն 'ի միջյ ուամլին և վիմացելց անապտուղ կարծեցեալ մտաց գտանէ իւր զընտիր ընտիրսն և ընծայէ մարդկութեան ամենազգի արժանագուլ մարդիկ , պաշտօնեայս երկնից աստուածարեալս և հովիւս ժողովրդեան հայրագութս . իշխանս քաջախորհուրդս 'ի հաստատութիւն և յերանութիւն ազգաց , իմաստասերս ուսուցիչս ճշմարտութեան և նեցուկս ուղիղ դաստիարակութեան , քաղաքագէտս սատարս անդորրութեան և վայելուչ կենաց , միով բանիւ քաղաքացիս արժանաւորս : Այս առանց բարերար ձեռին դաստիարակութեան իբրեւ ջոկ իմն անասնոց խառն 'ի խուռն , կամ իբրեւ զհեղեղ սահեալ անցանէր մարդկութիւնս խառնէլ 'ի ծով յաւիտենիս :

Կարծեալ որպէս ճարտարին արուեստ՝ զբիծս անգամ 'ի վիմին թագուցեալս յառաւելութիւն և 'ի գեղ պատկերին վերբերէ . սոյն և դաստիարա-

կութեան շնորհ, այն որ թերութիւնքն կարծին զծածուկ կիրս 'ի կատարելու թիւն մարդոյս փոխածէ : Իցէ քան զնափառն մոլութիւն, գազան է նա անագործն 'ի բուռն և յուժգին բարս, անխիղջ եղայրասպան, անողորմ, պրզնձաղի որդեկոտոր և ամբարիշտ հայրասպան . որ զարդարութիւն, զանմեղութիւն և զիրաւունս աստիճանս զնէ ոտնփոխս փառացն : Խակ 'ի տկարս սնապարծիկ ծազու արժանի և ձանձրաթերախտ : Խակայն դաստիարակութիւն գիտէ զայս 'ի ստոյն փոխակերպեալսէր փառաց շունչ իմն և ոզի ամենայն առաքինութեանց և գոտեպնդող յամենայն 'ի գործութեանց : Օսրտմտութիւն՝ զբարկագոյն քան զամենայն կիրս և քանդիչ, աւերող և դահիջ անձին և այլոց՝ 'ի վսեմ իշխանական վարչութիւն 'ի վերայ ինքեան և օտարին : Օնախանձմաշիչ, զժանգս մուաց և մարմնոյն՝ 'ի գեղեցիկ նախանձընդցէ մնմնութիւն ուսաքինութեանց մերձաւորին : Օմեզ յըն և զթոյլ բարս, որ անսպիտան գործէ զմարդ և մարմնապիշ մարմնոյ ստրուկ՝ դաստիարակութեան է փոխել 'ի քաղցրահամբոյր և յընտել գնացս ընդ նմանիս, և 'ի սիրտ ազնուագութ առ տառապեալ ընկերն : Խազի միյերկարեցից, դաստիարակութեան է զհոյլս խակ ախտաշարժ մոլաբոյս բնութեան՝ յառաքինութեանց փոխել 'ի գեղեցիկ ծաղկունս . քանդիշ շիք մոլութիւն յորում չիցէ և առաքինութեան սերմն իմն ծածկեալ 'ի նմա :

Դգաստիարակութեան՝ կամաց միայն և ձգանց և հլուականութեան դաստիարակելցն պէտք են . որք և երկնից հզօր օգնականութեան են ազդու շարժիչք . և ահա ամենայն գժուարինք 'ի գիւրինս, և առապարքն 'ի հարթ ձանապարհս : Խթրե զայլս 'ի գիտութեանց շիք սորա սկիզբն և մէջ և կատարած . կամ մանաւանդ բարւոք թուիցի ասել, սկիզբն միայն է : Ոչ առանձին ժամկարգեալ 'ի յուսումն, այլ միշտ 'ի նոյն կանխեալ դասս ամենայն մտադրութեամբ ցորչափ խորհիմք 'ի մեզ զմարդա:

Դյար մեծի գիտութեան նախուսումն ախակիտն լսովութիւն մարդոյ է, իսկ մեծամարմին մատեանք և ձոփ մատենադարանք՝ սիրոն և միտք :

Բ .

ԴՌ խելամանել, ասացաք, մարդոյս որ 'ի մեզ՝ պարտ է կանխել 'ի գիտութիւն Դստուծոյ, և ընծայութիւն հաւատոց էութեան նորա մատուցանել : Խւ թէ առանց այսր հաւատոց շիք իմիք հասու լինել 'ի մէնջ . որով և գիտութեանս կրկին ծայրը իցեն անհրաժեշտ՝ Դստուած և ոնցութիւն : Օի եթէ գիտութեանս մերոյ հիմն զԴստուած դնելով ոչ ամբարձուք զմարդկայնոյ գիտութեանս զկառոյց, խարիխուլ է ամենայն . ընդ վիհս անելս կործանել կայ մեզ գահավէժ, 'ի գաւառս ցնորից թափառել ընդ թոհ և ընդ բոհ, և քան յերազոջ ևս չարագոյն 'ի չքութեան խորս դանդաշէլ :

Դսացելոցս քաջ զփորձ էառ Խւրպա 'ի չարաշուք և յանարժան փիլիսոփայս իւր, 'ի հակառակորդս կրօնից սրբութեան . Որոց զբերանս եղեալ յերկինս, և զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ . . . Որք զանձինս առ խմաստունս ունեին յիմարեցան, և անձամբ անձանց փորեցին զիսորխորատ կորըտեան, կանխեալ հաւասարեալ անբանից՝ ոնչիւն պսակեցին զինքնապանձ գիտութիւն իւրեանց :

Ո գու, ուր գիմեալ երթաս, երկնից զօրութեանց տեառն հրաշալեաց խորազնին զրուցաբեր, որ իբրե 'ի մանկունս տգետս և յերկրաքարշ 'ի մեզ հայելով յանդուգն գարշապարզք միտացդ հսկայաբայլ ձեմես յասաեղատունս և անդր 'ի վեր անցեալ 'ի հաստատութեան : Խլայն ձակատուդ թուիմ զրումեալ տեսանել զաստեղազարդ կամարին զյօրինուած : Դարձիր միանգամբ մեծախորհուրդ էակ, ասա մեզ ո իցես որ միխսդ յանմատոյցս և յանսահմանս : Դարձուցեալ նորա զտխուրհայեցուածս լի արհամսրհանօք պա-

տասիրանի առնէ . Օ՞ք հարցանես , քեզ նման ծնունդ եմ դիպուածոյ , կոյր և տգէտ սկզբանս և վախճանի , և իբրև զիս զդիպաց արգասիս հետազօտելով վայրապար՝ ոչինչ առաւելեալ քան զնուսա . յանյուշութեան հոսիմ ծով :

Ո՞ինչ եղուկ նմա կարդայի յափշութեանս 'ի բարձրութեան անդ զնա 'ի խոր յանդունդս տեսանելով , և աստի զմնրդոյս բարձրութիւն ընդ անզուդորդ նուաստութեան , 'ի կրկին ծայրայեզս զնորա պայման , տեսանեմ և այլ ոք 'ի յալս խորինս . 'ի ստորինս երկրի էջս գործեալ ընդ խաւոյմն և 'ի կենդրոն անդր նորին միջամուխ , իբրև թզաւ իմն շափելով զանարդի և հրակայամարմին զանգուածոյն ստուարութիւն և բռամք զծանրութիւնն կըլելավ : Եւ դժոխադէմ թախիծ տխրութեան սրտին զաջօքն պատեալ թուիմ տեսանել գողդոջուն ձեռամք թողուլ անդ իւր յիշատակ , թէ Տացի հողս հասարակաց մօր , զորոյ յանդուզն բազկաւ պատառեմ զծոց . և շունչս այս լուծեալ յընդարձակութեան օդոյս խառնեսցի . եղէց իբրև զնախնիս իմ և ըզհարս և ողք չունիցին բնաւ անուն : Ա աշ եղուկ մարդկութեան , որպէս 'ի կարծեցեալ իմաստութեան իւրուման մուանայ : Այս կատուծոյ գործոց հետազօտութիւն արար նմա զարարին կորուսանել . այլ կորուսեալ միանգամ և անփոյթ ընդ կորուսոն՝ արարածովք համարեցաւ զբաղել զմիտս : Ինդ կատուծոյ կորոյս և զմարդկութիւնն , և յուսով վատթար քան զկաւ՝ հաւասարեցաւ ընդ ոչնչին :

Ի՞անզի մինչ չեւ ուսուցեալ մարդոյ զմնրդմ՝ տալ տեղեկութիւնս որ ինչ արտաքոյ նորա՝ այնպէս է , որպէս եթէ ոք յանյատակ օդս շնոււածս 'ի վեր կառուցանել խորհիցի : Խակ յետ զգեղեցիկ , զամբակուռ խարիսխն ձգելոյ՝ զաստուածգիտութիւն , և զսիւնսն կանգնելոյ՝ զմարդոյս գիտութիւն , այնուհետեւ մեծակառոյց , չքեղ 'ի վեր ամբարձցի մարդկայնոյ կատարելութեանց վայելուչ ատաձար : Այսուհետեւ յամենայն 'ի

ծանօթութիւնս իւր մարդն , յամենայն 'ի գիտութիւնս և 'ի նորանոր փորձս զմատուած և զմարդ նկատիցէ : Օ Աստուած՝ որ արարն զնոսա ամենազօր կարողութեամբն , և զմարդ՝ վասն որոյ արարաւ ամենայն ինչ , և ինքն ոչ վասն ուրուք , բայց կատուծոյ միայնոյ : Այսով ամենայն գիտութիւնք մեր իբրև Ճառագայթք 'ի կենդրոնէ աստուածգիտութեան և մարդոյս գիտութեան շողեալք՝ վսեմագոյնս փայլեցուսցեն 'ի մեզ կատուծոյ ծանօթութիւն և զմարդոյս Շիքյայնժամաց գիտութիւն արհամարհ . քանզի որ մտաց մարդոյս առաւելութեան է առիթ , կարևոր է : Եւ բազմացեղ ազգ գիտութեանց որպէս նաժիշտք հըլութեամբ սպաս տարցեն իբրև մեծափառ տիկնոջ մտաց մարդոյ :

Ա ասն այնորիկ եթէ ներեսցէ աստերկայնամիտ կատեանս , ոչ 'ի յաւելուած ինչ գիտութիւն նորա , այլ զի մանկուցյս և նոքօք առաջի աշխարհի խօսիմ 'ի ցոյց մերոյս գաստիարակութեան , անցից համառօտս իմն ուրուագրել զուսմունն՝ զոր յընթացս գաստիարակութեանս տամբ մանկուցյս 'ի վարժ . ցուցեալ և 'ի սոսա զծչգրիտ մերս գիտաւորութիւն :

Պաշտօնեայք քրիստոսեան կրօնից բարեպաշտութեան , և նորին կաթողիկէ եկեղեցւոյն , գաստիարակութեանս մերոյ ոգի և շունչ զկրօնից դնեմք Ճըմարտութիւն՝ զոր քարոզեմք 'ի կենդանի բարբառ և 'ի զիր 'ի հարիւրից և յիսնից ամաց հետէ յարևմուտս և յարևելս : Եւ յայս կրօն սուրբ 'ի տեսականն և 'ի գործնական վարժեմք զմանկ տին ընդ ողջոյն ամն գաստիարակութեան նոցա :

Պատուեմք զազգին և զնախնեաց լեզուն , զոր զկնի կրօնից իբրև աւանդ սուրբ և աստուածապարգե շնորհ պահեմք հաւատարիմ : Այս երիցանուոյն լոկ համարիմք զնա կարևոր , զի կրօնական բարբառ է այժմ և ոչ քաղաքական , այլ համօրէն ազնուախոհ հայ ժողովը գեան , որ ընդ նախնեացն ազնուականութիւնս պարձեսցի , որ չիցէ օտարա-

Խորթ որդի և 'ի մէջ ազգաց զաւակ ընկեցիկ : 'Խարձեալ սովաւ համարիմք խաղաղատել մոտօք ազգասիրութեան ոգւով ընդ անցեալ, ընդ այժմեան և ընդ գալիք որդիս ժողովրդեան իւրոյ : Ինդ առաջնոցն ընդ վսեմախոչ խորհրդոց առաքինութեանց լինելնախանձաւոր . երկրորդին իբրև ծնողաց և եղբարց բարերարել միշտ և մոտօք և մարմնով . իսկ երրորդականացն զգալոց ազգաց իբրև զորդոց և զթոռանց խնամունելով թողուլ և նոցա օգտաբեր բարեաց ինչ յիշատակ, քաջ եղեալ 'ի մտիթէ ոչ ամենայն ինչ մեօք և 'ի մեզ վախճան առնուցու : Աւանիմք և զօտաբաց զիմաստուն ազգաց զբարբառու , զի զնոցա գեղեցիկ իմաստոն և զխորհուրդս ընդ մերոյս պատուաստել կարիցեմք , զի զոր նոքա երկարժամանակեայ վաստակօք շտեմարանեցին՝ մեք 'ի մեզ դիւրեաւ յեղուլ մարթասցուք . զարձեալ զի և ժամանակին օրինաց քաղաքականութեան հնազանդեալ, վայելուչ մեզ կեանս հայթհայթեացուք :

Դպա զայ պերճախոսութեան և տրամաբանութեան արուեստ՝ որ զլեզուն ընդ մտացն գեղեցիկ զօդիւք կապեալ , խոհականին տան զերեսանակ լեզուի՝ վարել զնա ընդ ուղիղ պողոտայ առաջնորդութեան խելաց : Պերճախոսութեան է գեղայօրէն պՃնեալ զարդարելիբրև զկոյս մի չքնաղ զմուաց մերոց ծնունդս բանիւ բերանոյն 'ի լցու բերելով : Եւ խոհուն ծանր տրամաբանութեան քօղիմն ծածկութեան արկանել զզարդուքն և զգեղովն , և վայելազոյն ևս համովն և չափով զնոյնս փայլեցուցանել , չքնաղազոյն և ըղձագոյն զայն զործել : Որդօք 'ի նմանիս մեր իշխանութիւն իմն զանձամք առնումք՝ նոյին հաճութեամք գերել զմիտուզհետ խորհրդոց մերոց և կամաց :

Խակ աշխարհագրական զիտութիւն իբրև զձեռանէ կալեալ շրջեցուցանէ զմեզ ընդ սահմանս երկրագնտոյս , զոր լարաբաժին կարգեաց ամենակալն 'ի բնակութի որդւոց մարդկան . տուեալ նոցա զօրութիւն և միտու գեղազարդել

զերեսս երկրի 'ի ծնունդս հանձնարոյ և ձեռաց :

Դպա երկրաբանուկան գիտութիւն , և բուսոց և կենդանեաց բանայ մեզ առաջի տեսաբան ամենազուարձ : Ո՞երթ 'ի խորս երկրի առեալ տարեալ զմիտու , ընդ նիւթոյն կարդ և յօրինուած սքանչացուցանէ . մերթ յերեսս նորին ամբարձեալ ընդ բազմապիսի երեելի երեելի զարդս 'ի բոյս և 'ի կենդանի յապուշ կրթեալ մոզէ : Եւ յուսահատ ամենեին 'ի միտ առնուլ զամենաբնոյթ , զամենացեղ թագաւորութիւն , և զանհամարն , զանթիւ ցեղակարգութիւն բուսոց և կենդանեաց , և մանաւանդ տեսանելով նորագիւտ աչօք՝ յաշխարհիս այլնորանոր աշխարհս փոքունս անթուելի կենդանեօք խոնիեալս . զոր օրինակ 'ի խուն ինչ տերեեիկ՝ անտառ մի մեծ սփուեալ անասնովք , 'ի կալթ մի ջրոյ՝ լիճ՝ լուզակօքն զարդարեալ , և ընդ օգոյս նուրբ տարածութիւն բիւրաւորաց 'ի սփիւռ ծաւալեալ , և անդէն այլ յայլմէ լեալ և յանձննէ 'ի զուրս առ արարիչն հասարակաց աղաղակէ մարդս , թէ ' Ո՞եծ ես Տէր և 'ի փոքունս . . . :

Եւ խուն ինչ առեալ զձաշակ ապա աստեղաց գիտութե այնուհետև զայս ամենայն հրաշապատումս առ հրաշագունիւք և վակեմափայլ անկոտար տարածութիք երկնից իբրև աւազահատ մի համարից . յորում զարեգակն տեսեալ կենդրոն և սիրտ կենդանութեան և շարժման ողջոյն մեծամարմին բնութեան տիեզերաց , և զրոյլ ջահավառ աշխարհաց սփուեալս շուրջ 'ի զարմանագործ մատանց հրաշալեաց տեառն , և ափ 'ի բերան չունիցի ինչ ասել , յանչափ մեծութեան արարչին խորասուզեալ միտք նորա :

Յետ այսորիկ և ամենուսոյց վարժին , հինաւուրցն դաստիարակ 'ի վերայ եկեալ՝ պատմութիւն , կարեոր զուարձութեամբք հանդերձ ազգու և զօրաւոր օրինակօք մարդէ զնոսա : Փեռեկէ նոցա առաջի զանցեալ մարդկան զիսորհուրդս 'ի ներքին սենեակս մուաց , զհնարիմաց ձանսապարհ կենաց , զբարի

և զքար արարս և զանհրաժեշտ նոցին հետեւորդս : Այրա է իր բւ մոգական ինչ արուեստիւ միջամուխ զաշակերտեալն իւր առնել 'ի գաղանածածածուկ խորհրդարանս բռնաւորաց .քննել զպետութեանց գնաց , խելամուտ առնել անկման նոցա և կանգնելց : Առ ուրեք զի և հանգերձելց զիապաց անգամկան խասաց գուշակս : Արոյն ճառից պէտք էին արդեօք զպատամութեան առաւելութեան խօսել , մանաւանդ զազգայնոյն , որ օրինակաւ հաւուց իւրաց և նախնեաց զառաքինութիւն սիրելի նկարիցէ , և զախտս մոլութեանց ատելի :

Իսկ թուաբանական և երկրաչափական գիտութիւնք հանգերձ բազում և մեծամեծ օգտիւք 'ի պէտս կենաց աշխարհիս , 'ի ճարտարութիւն քաղաքականութեան , յաւելուն և կորով մտաց զիւրաւ հասու ճշմարտութեանց լինել՝ որ ամենակարեորն է յամենայն 'ի զիտութիւնս և վայելուց ողջոյն կենաց մարդոյ :

Այսպէս ընդ աստիճանս իմն 'ի վերելեալ զիտութեամբք պիտանեօք 'ի կատարելութիւն մարդոյ՝ հասանեմք 'ի բնաբանական և 'ի բնազանցական զիտութիւնս .յորոց բնաբանութիւն ածէ մեզ զառաջեաւ զհրաշալիս բնութեան զբազմազանա գեղեցիկ տեսարանաւ 'ի հանդէս , և բնազանցութիւն զմնարդոյ և զնորին արարչի և տիեզերաց զկատարելութիւնս մեզ ուսուցանէ : Այն աստուածօրէն Ճոխանալ տայ մեզ 'ի վերայ բռնաւորագունից անգամ տարերաց . զհուր ընկճեալ և նորին հլուաբանեկութեամբ ընդ ծով վարգել և ընդ ցամաք . զօդս խոնարհել և ընդդէմ մարմնոց ծանրութեան ընդ այն նաւարկել առանց . եռուոց . և յանդգնելիսկ 'ի ձեռանէ բնութեան զշանթից յափշտակել կայծականց զօրութիւն : Երկրորդն գիտութիւն աստուածուսոյց և մարդուսոյց . թէպէտ զլ'ստուած յաղօտաճաճանչ յէռութեան իւրում և յանի մանալի միութեանն նկարէ ահաւոր 'ի մահկանացու միտս մարդոյ , սակայն 'ի խնամողականն , հայրենին . յարդարն և

'ի մարդկասէր ավզեցութիւնս իւր քաղցրայուշ արարածոց իւրաց սփոփական և միխթմարիչ : Ինաբանութիւն ոչ արտաքին կեղեանմօք իրաց շատացեալ , խորամախ 'ի նելքս լինի , և յաշխարհի զայլ բազմաթիւ աշխարհս , և 'ի արեգերիս զայլ տիեզերս մեզ ցուցանէ : Այսպէս և բնազանցութիւն՝ ընդ կաւեղէն յարկաւ մարդոյոս ուսուցանէ նշոյլ ինչ աստուածութեան բնակեալ , 'ի շնոյ նորաաստուածագրում արարած , ինքնատէր ազատութեամբ Ճոխացեալ : Ակզբանն անգէտ՝ բայց զի յոշնչէ եղեւ , այլ վախճանին գիտակ՝ զի անմահէ և յաւիտենական : Այսով բանիւ , երկոքին այսոքիկ գեղեցիկ համառատութիւնք մարդկայնոյ վայելուց գիտութեանցն :

Ասսա որպէս յայլ ամենայն ուսմունս Ճշմարտութիւն խնդրեալ՝ զլ'ստուած և զմարդ , զայլ ամենայն ընդունայն տեղեկութիւնս ժամավաճառ զբօսանս մտաց հաւատամք և վայրապար սեթեեթո : Ակայն պատուեմք և զգեղարուեստո՝ որյետ նիւթականին կենաց հայթ հայթելց՝ մասն է դաստիարակութեան , զմտաւորական հանձար մարդոյ ընդ ձեռացն Ճարտարութեան գեղեցիկս զուգորդելով՝ ցուցանել զնորայն գերազանցութիւն և յայսմ :

Այսով բանիւ , մանկութեան բուրաստանս համարիմք զվարժոցս դաստիարակութեան տղայոց , յորս մատաղ տունկք առաքինութեան նոցա մեծախնամմակին , մոլութիւնք կոճոպէալ քանցին , և ամենայն փոյթ զնոցանէ ոչ պակասին երեք : Այլ աւաղ , զի է երեք որ 'ի բուրաստանէս փոխարն կեալ յաշխարհ , խորշակք փորձութեց աշխարհի անպատսպար գտեալ զնոսա և հեռի 'ի ձեռաց և 'ի խնամոց մշակին թառամեալ ցամաքեցուցանեն : Այլ մարթ է և կանխագուշակ աղէտիցս գարման տանել խորագոյնս տարածելով զարմատս առաքինութեան և երկիւղածն բարեպաշտութեան :

Այս է ահա ձեր պայման կենաց , ջանասէր մանկունք , այժմէն ասեմզարմատս առաքինութեան 'ի խոր ձգել

պարզամիտն հըւականութեամբ ձերով, զի՞ ի ժամանակի մըրկելց բնութեան հեղեղացն անսասան կացջիք : Այժմէն պարտիք հիմն դնել ձերոց երխասարդ կենացն, այրութեան հասակի և ծերութեան և հանդերձելցն իսկ : Եթէ ոչ կանխեալ տնկիցէք զառաքինութեան բոյս՝ ոչ երբէք ծառացեալ նոցին ՚ի հովանին վայելիցէք ՚ի տօթաժամու փորձանաւոր աւուրցն և ջերմանջերմ կրից, և ոչ գտջիք հանգիստ ՚ի խոնջ վաստակեալ հասակին : Ամենայնի ժամանակ է սերմանելց և հնձելց . առանց սերման, ցիցեն և հունձք : Ահասհեալ էանց զձեօք տղայութեան տիսեղծ անբանական հասակ . թէակէտ ՚ի մանկութեան ցարդ, այլ մանուկ զոլ մնավարժ և ոգեց բարւոյ հանդիպել անվրէպ իմաստութեան է սկիզբն և նշանակ : Երջանիկ ամք և ըղձագոյն ժամանակ, մինչեւ ՚ի վերայ հասեալ հոգք և տաղտապանք զնիւթական կենաց, մինչեւ զգացեալք կարիք մարդկութեան խոցք և խութք զօրաւոլք : Ահա ձեզ ասպարէզ արութեանց, յորում ՚ի վարձ և ՚ի յաղթանակ կշռին ձեզ առաքինութեց գեղեցիկ շարք, իմաստութիւն հանձարց, համբաւ բարի, սիրելի և ցանկալի լինել և Աստուծոյ և մարդկան . և զայս և զայն կեանս յաւէտ երջանկացուցանել :

Արացարուք առաքինիք, չթողուլ անցանել զձեօք և ոչ վայրկեան մի ժամու, յորմէ կազմին և ժամք և աւուրզ և եօթնեակք և ամիսք և ամք և ողջոյն իսկ ընթացքամայդ դաստիարակութեան ձերոց, և ապագայ կեանք : Ոի մի լիցի ձեզ ՚ի վախճանի ամայն զախուր աչքարձուցեալ ՚ի թիկունս չտեսանել այլ ինչ քան զիրուստ ժամանակի անպրտուղ և անշահ, ամօթ ծանր և ապաշաւ վայրապար : Աչ ակնկալութիւն յետս դարձի, և ոչ կրկին ընդ նոյն անցանելց յոյս : Այլ քաւ յինէն, որդեակք, զայսպիսիս զձէնջ խիթալ, ուրտարեկան ձիգն ձեր և փոյթ զովելի, ապանեացն ամաց հաւատուս մեզ տայ : Եւ արդէն թուիմտեսանել զվեցամեան

դաստիարակութեանս ժամանակ ՚ի գըլուխ հասեալ, և զձեզ քաջահմուտս թէ զինչ մարդն իցէ որ ՚ի ձեզ բարձեալ տանիք . զինչ գործոց նորա սահման, և զոր խորհուրդ խորհեցաւ զնմանէ Տէր : Այնուհետեւ միտք բարձրախոհք և ոզիք աստուածամերձք, ձշմարիտ քրիստոնեայք և աստուածազաւակք, զառաքինութիւն ընդ լուսաւոր գիտութեան զուգորդեալ հայրենեայ և ընտանեաց ձերոց ընծայեսջիք : Այնուհետեւ ՚ի ձեզ ՚ի միտ առցէ աշխարհ թէ մարթ է զզիտութիւն ընդ խոնարհութեան լցորդել . ձեօք հաւաստեսցի թէ չէ յանհնարիցն ընդ աշխոյժ տատանեկութեան ՚ի մի զուգել զխոհական գործունէութիւն . ձեօք տեսցի թէ հայրենասիրութիւն, մարդասիրութիւն և սէր ընկերին քրիստոնէական են առաքինութիւնք . ՚ի ձէնջ տզիտութիւն ընդ կանխսակալ մայորութեանց տեղի տուեալ փախչիցի, ՚ի ձեզ, որդեակք, քրիստոական կրօն գտցէ իւր նեցուկ և ջատագովս, Աստուած զփառս, և տուն Ախիթարայ զփոփանս :

Հ. Ա. ՃԱՄ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՅԵ ՏԵՂԵԿԱԼԻԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գրագուններու վրայ աեղեկութեն :

Գ. ՊԵՐԴԱՄՈՒՆ : — Եւմենէս և Ատաղոս Պերգամոյի թագաւորները Եղիպատոսի Պտղումեանց փառացն ու մեծագործութեանցը հաւասարել ջանալով գրատուն մը կանգնեցին որ հին պատմութեանց մէջ շատ երկելի է, և ըստ երեցն Պիհնիոսի մէջը 200,000 հատոր զիբը կայ եղեր : Առափայէլ Աղաղերը բանականու գիտնականը կը պնդէ թէ Պերգամոնի առման ժամանակ այս զրատունն ալ այրեր է, բայց Պիհնիոս և ու